ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Ուսումնական կենտրոն

Ուսումնական ծրագիր
Նախնական մասնագիտական կրթության «Ոստիկան» որակավորման
«Մանկավարժությունը և հոգեբանությունը ոստիկանության ծառայողի
գործունեության մեջ» **առարկայի** դասընթացի

Քննարկվել և **հաստատվել է**
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ուսումնական կենտրոնի <<Ընդհանուր
պատրաստականություն>> կրթաճյուղի
01. 06. 2018 թ. № 4 նիստում

ք.Երևան
2018թ.

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Նախնական մասնագիտական կրթության <<Մանկավարժությունը և հոգեբանությունը ուստիկանության ծառայողի գործունեության մեջ>> առարկայի եռամսյա դասընթացի

	Թեմաների անվանումները	ժամաքանակն ըստ թեմաների	ժամաքանակն ըստ պարապ-մունքի ձևերի		
			դաս.	գործ	սեմ.
N	2	3	4	5	6
1	Հոգեբանական գիտելիքի դերն ու նշանակությունը ոստիկա-նի գործունեության մեջ: Ոստիկանի մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները	2	2		
2	Հոգեկան իմացական գործընթացներ	4	2		2
3	Հույզեր, զգացմունքներ, հոգեվիճակներ	2	2		
4	Անձը որպես հոգեբանական ճանաչողության օբյեկտ: Ոստիկանի մասնագիտական կարևոր անձնային առանձնահատկությունները	4	2		2
5	Սոցիալական խմբերի հոգեբանական նշանակությունը ոստիկանի գործունեության մեջ	2	2		
6	Ոստիկանության ծառայողի էթիկան	4	2		2
	ԸՆԴԱՄԵՆԸ	18	12		6

Կազմեց՝
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի <<Հատուկ պատրաստականություն>> կրթաճյուղի դասախոս, ոստիկանության մայոր
_____ Ն. Նազարյան

Քննարկվել և հաստատվել է
կրթահամալիրի ուսումնական կենտրոնի << Ընդհանուր պատրաստականություն>> կրթաճյուղի նիստում. արձանագրություն թիվ 4, 01.06.2018թ.
կրթաճյուղի պետ, ոստ.փոխգնդապետ
_____ Ա.Ալեքսանյան

1. Դասընթացի ընդհանուր ծավալը ըստ պարապմունքի տեսակների

Ուսումնական պլանին համապատասխան դասընթացի ուսումնասիրման համար հատկացված է 18 ժամ, որից՝

- դասախոսություն- 12 ժամ,
- սեմինար - 6ժամ

2. «Մանկավարժությունը և հոգեբանությունը ոստիկանության ծառայողի գործունեության մեջ» դասընթացի ուսուցման նպատակը և խնդիրները

Առարկայի հիմնական նպատակն է ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններում ծառայության անցնելու նպատակով նախնական մասնագիտական կրթություն ստացող սովորողների մոտ ձևավորել ոստիկանին անհրաժեշտ հոգեբանական համապատասխան գիտելիքներ և որակներ մասնագիտական գործունեության ընթացքում դրանք արդյունավետ կիրառելու համար:

Նախատեսված նպատակին հասնելու համար առաջադրվում են հետևյալ խնդիրները՝

1. ձևավորել ընդհանուր պատկերացում հոգեբանության և մանկավարժության առարկայի, հոգեկանի օրինաչափությունների ու մեխանիզմների, ոստիկանի մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ,
2. գիտելիքներ հաղորդել անձի հոգեբանական առանձնահատկությունների, հոգեկան իմացական գործընթացների, հուզակամային ոլորտի վերաբերյալ,
3. ձևավորել հոգեբանական անհրաժեշտ գիտելիքները մասնագիտական գործունեության ընթացքում կիրառելու կարողություններ և հմտություններ,
4. զարգացնել և հղկել ոստիկանության ծառայողին անհրաժեշտ մասնագիտական կարևոր հոգեբանական որակներ և ունակություններ,
5. ապահովել պատշաճ բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակ:

3. Դասընթացի բովանդակության յուրացման մակարդակին ներկայացվող պահանջները

Սովորողները պետք է իմանան և ճիշտ ներկայացնեն հոգեբանության և մանկավարժության առարկան, հոգեբանության ուսումնասիրման մեթոդները, ոստիկանության ծառայողի գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, ոստիկանի մասնագիտական կարևոր անձնային որակները, անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, անձի հոգեվիճակի գնահատման և դրա հիման վրա համապատասխան վերաբերմունքի դրսևորման օրինաչափությունները, ոստիկանության ծառայողին ներկայացվող էթիկայի պահանջներն ու կանոնները:

Սովորողները պետք է կարողանան՝

1. վստահության և անվտանգության զգացում ձևավորել քաղաքացիների մոտ,
2. բացահայտել անձի հոգեբանական առանձնահատկությունները և անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր քաղաքացու նկատմամբ,

3. մասնագիտական գրագետ հաղորդակցման, հոգեբանական ճիշտ մոտեցման և վարվելակերպի միջոցով քաղաքացիներին տրամադրել համագործակցության,

4. դրսևորել զարգացած մասնագիտական հիշողության, մտածողության, ուշադրության, դիտողունակության, հուզակամային որակներ և ունակություններ,

5. մասնագիտական գործունեության ընթացքում կիրառել հոգեբանական գիտելիքների վրա հիմնված միջամտության հնարքներ՝ հաշվի առնելով սոցիալական իրողությունները և հոգեբանական իրականությունը:

4. Կապը ուսումնական պլանով նախատեսված այլ առարկաների հետ

Դասընթացը սերտորեն կապված է ուսումնական պլանով նախատեսված այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են «Հաղորդակցման հմտություններ», «Մարդու իրավունքները և ոստիկանությունը», «Ոստիկանության և հասարակության փոխհամագործակցությունը»:

5. Դասընթացի ուսուցման մեթոդական ցուցումներ

Ուսուցումը իրականացվում է դասախոսությունների և սեմինարների միջոցով, որոնք անց են կացվում ինտերակտիվ մեթոդներով: Դասավանդման ընթացքում օգտագործվում են նաև տեխնիկական միջոցներ, տեսանյութեր: Նյութի յուրացմանը մեծապես օժանդակում են դիդակտիկ պաստառները: Պարապմունքների ընթացքում գործնական վարժությունների, իրավիճակային խնդիր-առաջադրանքների և դերախաղերի միջոցով սովորողների մոտ ձևավորվում են գործնական անհրաժեշտ հմտություններ և ունակություններ, որոնք, տեսական գիտելիքներով ամրապնդվելով, դառնում են առաջիկա արդյունավետ մասնագիտական գործունեության կարևոր պայման:

6. Ուսումնական նյութի բովանդակությունը

Թեմա 1 Հոգեբանական գիտելիքի դերն ու նշանակությունը ոստիկանի գործունեության մեջ: Ոստիկանի մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները

1. Հոգեբանությունը և մանկավարժությունը որպես գիտություն, հոգեբանության առարկան, հոգեբանության ուսումնասիրման մեթոդները:
2. Հասկացություն հոգեկանի և հոգեկան երևույթների մասին:
3. Ոստիկանի մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատ-կությունները /մասնագիտական վարքի իրավական կանոնակարգումը, գործունեության արտակարգ բնույթը, հաղորդակցման առանձնահատկությունները, գործունեության կոնֆլիկտային բնույթը և այլն/:

Թեմա 2 Հոգեկան իմացական գործընթացները

1. Հասկացություն զգայության մասին, զգայության տեսակները:

2. Ընկալում, ընկալման առանձնահատկությունները և տեսակները:
3. Հիշողություն, հիշողության տեսակները, հիշողության արդյունավետության վրա ազդող հիմնական գործոնները:
4. Մտածողություն, մտածական գործընթացներ, մտածողության ձևերը և տեսակները:
5. Երևակայության էությունը և տեսակները:
6. Ուշադրություն, ուշադրության հատկությունները, տեսակները, ուշադրությունը գրավելուն նպաստող գործոնները:

Թեմա 3 Հույզեր, զգացմունքներ, հոգեկան վիճակներ

1. Հույզերի բնութագիրը, տեսակները:
2. Զգացմունքների բնութագիրը, տեսակները:
3. Հույզերի և զգացմունքների հիմնական հատկությունները և ֆունկցիաները:
4. Սթրես, տեսակները, զարգացման փուլերը:
5. Աֆեկտ, հիմնական հատկանիշները, զարգացման փուլերը:

Թեմա 4 Անձը որպես հոգեբանական ճանաչողության օբյեկտ: Ոստիկանի մասնագիտական կարևոր անձնային առանձնահատկությունները

1. Անձ և անհատ հասկացությունները:
2. Անձի անհատական-տիպաբանական առանձնահատկություններ:
3. Խառնվածք, տիպերը:
4. Բնավորություն, դրա արտահայտիչ հատկանիշները:
5. Վիկտիմ որակները որպես հանցագործության տուժող դառնալու պայման: Տուժողի նկատմամբ հոգեբանական պատշաճ վերաբերմունք:
6. Ոստիկանի մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ անձնային կարևոր առանձնահատկությունները:

Թեմա 5 . Սոցիալական խմբերի հոգեբանական նշանակությունը ոստիկանի գործունեության մեջ

1. Սոցիալական խումբ: Խմբերի տեսակները, մեծ և փոքր խմբեր:
2. Սոցիալական խմբերի կառուցվածքը:
3. Ամբոխը որպես սոցիալական խումբ: Ամբոխի տեսակները:
4. Գործող ամբոխի առանձնահատկությունները և տեսակները:
5. Ամբոխի կազմում գտնվող մարդու վարքի առանձնահատկությունները

Թեմա 6 Ոստիկանության ծառայողի էթիկան

1. էթիկայի Հասկացությունը :
2. Ծառայողական էթիկետ:
3. էթիկական ոստիկանական ծառայության սկզբունքները և արժեքները:
4. Ոստիկանին ներկայացվող էթիկական պահանջները:
5. Ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները:

Գրականության ցանկ

1. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք Երևան 2002թ.
2. <<ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին>> ՀՀ օրենք /11.04.2005թ./
3. Նազարյան Ն.Մ. Ոստիկանի մասնագիտական գործունեության և անձի հոգեբանական առանձնահատկությունները: Ուսումնական ձեռնարկ. Եր.: 2015թ., - 230 էջ
4. Նազարյան Ն.Մ. Կոնֆլիկտները և դրանց կառավարումը: Ուսումնագործնական ձեռնարկ /Ն.Մ.Նազարյան - Երևան: ԱՁ՝Արման Ասմանգուլյան՝, 2016թ., – 306 էջ:
5. Նալչաջյան Ա. Հոգեբանության հիմունքներ: Երևան: «Հոգեբան» հրատ., - 1997թ.
6. Асвмов С.В., Пулатов Ю.С. Профессионально-психологический тренинг сотрудников ОВД: Учеб. пособие.- Ташкент: Академия МВД Республики Узбекистан, 2000.- 141с.
7. Безносов С.П. Профессиональная деформация личности.-СПб.: Речь,2004.-272с.
8. Васильев В.Л. Юридическая психология. - СПб .: Питер, 2002. – 656 с. Прикладная юридическая психология: Учеб. пособие для вузов /Под ред. А.М. Столяренко. - М.: ЮНИТИ-ДАНА, 2001. – 639 с.
9. Прикладная юридическая психология: Учеб. пособие для вузов /Под ред. А.М. Столяренко. - М.: ЮНИТИ-ДАНА, 2001. – 639 с.
10. Профессиональная этика сотрудников правоохранительных органов. Учебное пособие /Под ред. А.В.Опалева, Г.В.Дубова.М.: §Щит-М¦. 1998. - 327с.
11. Чуфаровский Ю. В. Психология оперативно–розыскной и следственной деятельности.- М., 2003г.
12. ,,Энциклопедия юридической психологии,, под. обшей ред. А. М. Столяренко М., 2004г.